խիլ ընդ գործ աշխարհականաց մերոց, այլ կարգադրութիւնք վասն կառավարութեան ժողովրդեան որ ոք սահման որ էկլէզիաստիկ նորում շարել կամիցի հարկաւոր է լինիլ ընդունելութեամբ տանն հայոց։

ԳԼՈՒԽ ՅՂԸ.

Ամենայն հատոր Օրինացս ունի բազում մասունս որ կարի 'ի ձեռանէ արանց իմաստնոց բացատրել զամենայն զոր ինչ բացատրութիւնք յօրինացս եթէ բարեպէս զի հաճեսցի 'ի կամս տանն հայոց պատուեսցեն, բայց 'ի յայնմանէ որ լինիցի ընդ դէմ բնութեան մարդոյ։

ԳԼՈՒԽ ՅՂԹ.

Ամենայն բնութիւն մարդոյ բնակողաց 'ի յերեսս երկրի հայոց, ազատապէս զգեսցի հանդերձս իւր ձեռագործէ աշխարհէն հայոց, այլ նոքա որ յաւելորդասցեն զգենուլ ձեռագործս տարբ յաշխարհի, եթէ արու և եթէ էգ, եթէ իշխան, եթէ պաշտօնատար, հարկեսցի հատուցանել ոմն 'ի տարոյ միոյ քսան դահեկան երծաթ առ տունն հայոց վասն մնոտի պարծանաց իւրոյ զի ձգտեցաւ միտս առն յայնմիկ առաւելագոյն փայլիլ 'ի մէջ հասարակաց։